10. Տորֆավան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված գյուղատնտեսական նշանակության 05-089-0052-0072 ծածկագրով՝ 0,82429հա 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 10 (տաս) տարի ժամկետով:

11. Տորֆավան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված գյուղատնտեսական նշանակության 05-089-0051-0008 ծածկագրով՝ 14,01752հա 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 10 (տաս) տարի ժամկետով:

12. Տորֆավան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված գյուղատնտեսական նշանակության 05-089-0050-0001 ծածկագրով՝ 29,71572հա 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 10 (տաս) տարի ժամկետով:

13. Տորֆավան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված գյուղատնտեսական նշանակության 05-089-0052-0071 ծածկագրով՝ 20,21908հա 4-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալության մրցույթային կարգով՝ 10 (տաս) տարի ժամկետով:

14. Հաստատել վարձակալության տրամադրվող 4-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 3900 (երեք հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

15. Հաստատել վարձակալության տրամադրվող 5-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1հա-ի համար 1650 (մեկ հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ խոսքը վերաբերում է Վարդենիս համայնքի Տորֆավան բնակավայրի վարչական սահմաններում ընգրկված 13 միավոր, ընդհանուր մակերեսով՝ 89.60511 հա Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելուն: Տեղեկացնում եմ, որ Գեղարքունիքի մարզպետը տվել է իր դրական եզրակացությունը՝ նշված վարելահողերը վարձակալության տրամադրելու համար, համապատասխան փաստաթղթերը կցված են և գործնառնականորեն հասցնելու համար անհրաժեշտ է Ձեր թույլտվությունը և միաժամանակ սահմաններով վարձակալության մեկնարկային գինը և վարձակալության ժամկետը: Գինը սահմանել՝ 4-րդ կարգի համար՝ 1 հա-ի համար 3900 ՀՀ դրամ, 5-րդ կարգի վարելահողի տարեկան մեկնարկային գինը 1 հա-ի համար 1650 ՀՀ դրամ և վարձակալության ժամկետը սահմանել՝ 10 տարի:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Լսեցին

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՍՈՒԹՔ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Տիգրիս» ՍՊԸ-ի եզրակացությունը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Սոթք բնակավայրի 3-րդ փողոց 16/1 հասցեի (ծածկագիր 05-080-0020-0006, սեփականության իրավունքի վկայական N 05-080-0020-0006) 0,07192 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը և 127.6 քմ քանդված շինությունը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

2. Մեկնարկային գինը սահմանել համաձայն գնահատման՝ 110,000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Սոթք բնակավայրում նույն ծրագրից օգտվելու նպատակով ևս մեկ հողակտորի համար՝ 05-080-0020-0006 ծածկագրով՝ 0.07192 հա հողատեսքը, որի վրա առկա է 127.6 քմ քանդված շինություն, օրենքով սահմանված կարգով կատարվել է գնահատում և գնահատման արդյունքում, անշարժ գույքի շուկայական արժեքը կազմում է 110 հազար ՀՀ դրամ: Համապատասխան փաստաթղթերը նախագծում առկա են: Առաջարկում են թույլատրել անշարժ գույքը օտարել, և մեկնարկային գին սահմանել, համաձայն գնահատման ակտի՝ 110 հազար ՀՀ դրամ:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Քվեարկություն:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 2-րդ փողոց 1-ին նրբանցք 7 հասցեի (ծածկագիր 05-080-0013-0007, սեփականության իրավունքի վկայական 14052024-05-0053) 0.38736 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

2. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 5-րդ փողոց 18 հասցեի (ծածկագիր 05-080-0041-0021, սեփականության իրավունքի վկայական 14052024-05-0051) 0.19294 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

3. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 5-րդ փողոց 1-ին նրբանցք 11/1 հասցեի (ծածկագիր 05-080-0040-0004, սեփականության իրավունքի վկայական 14052024-05-0059) 0.0712 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

4. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 2-րդ փողոց 8/3 հասցեի (ծածկագիր 05-080-0032-0020, սեփականության իրավունքի վկայական 14052024-05-0076) 0.38181 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

5. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 1-ին փողոց 3-րդ նրբանցք 9 հասցեի (ծածկագիր 05-080-0027-0006, սեփականության իրավունքի վկայական 14052024-05-0077) 0.34575 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

6. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի 4-րդ փողոց 1-ին նրբանցք 3 հասցեի (ծածկագիր 05-080-0009-0009, սեփականության իրավունքի վկայական 14052024-05-0080) 0.15871 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

7. Մեկնարկային գինը սահմանել, կադաստրային արժեքի 1քմ-ի համար 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ (19-րդ գոտի):

8. Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս համայնքի Կուֆ բնակավայրի Է. Բալասանյան 1-ին փողոց 2 հասցեի (ծածկագիր 05-057-0009-0020, սեփականության իրավունքի վկայական 13052024-05-0029) 0,0885 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ վաճառքի միջոցով:

9 Մեկնարկային գինը սահմանել, կադաստրային արժեքի 1քմ-ի համար 92,4 (ինսուն երկու ամբողջ չորս) ՀՀ դրամ (20-րդ գոտի):

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը նշելով, որ Վարդենիսի համայնքապետարան են դիմել թվով 7 բնակիչներ, 6-ը Սոթք և 1-ը Կուֆ բնակավայրերում բնակելի կառուցապատման հողամաս ձեռք բերելու՝ կառավարության կողմից ֆինանսավորմամբ ծրագրի շրջանակներում բնակելի տուն կառուցելու համար: Սոթք բնակավայրում ընդհանուր՝ 1,53777 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասեր և Կուֆ բնակավայրում՝ 0,0885 հա: Սոթք բնակավայրի հողամասերի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 1 քմ-ի համար՝ 141,9 դրամ, Կուֆ բնակավայրի հողամասի համար մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 1 քմ-ի համար՝ 92.4 ՀՀ դրամ:

Պահանջվող բոլոր փաստաթղթերը կցված են՝ նախագծում ներկայացված է ըստ ծածկագրերի, հասցեների և չափերի:

Առաջարկում են տալ Ձեր թույլտվությունը՝ նշված հողատեսքերը օտարելու և մեկնարկային գին սահմանելու համար:

Կարեն Մկրտչյանը առաջարկեց, որ Սոթք բնակավայրի հողամասերի մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 1 քմ-ի համար՝ 200 դրամ, որը արժանացավ հավանության:

Հարցի շուրջ այլ առաջարկություններ, առարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՂԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 5-րդ կետի, համայնքի ղեկավարի առաջարկությունը և հիմք ընդունելով 10.05.2024 թվականի հանրային քննարկման արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի 2-րդ փողոց անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Լեոնիկ Ղազարյանի անվամբ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի 4-րդ փողոց անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Կամո Հովհանյանի անվամբ:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի 1-ին փողոց անվանակոչել Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Սամո Ղազարյանի անվամբ:
4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի 3-րդ փողոց անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Արշակ Սարգսյանի անվամբ:
5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի 5-րդ փողոց անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Սեյրան Սարոյանի անվամբ:
6. Հանձնարարել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնին ապահովել որոշման կատարումը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրում զոհված զինծառայողների հարազատների նախաձեռնությամբ և Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի աջակցությամբ անցկացվել է հանրային քննարկում՝ Նորակերտ բնակավայրի փողոցները Հայրենիքի համար նահատակված հայորդիների անունով անվանակոչելու մասին: Հաշվի առնելով հանրային լսման արդյունքները, և մեծագույն հարգանք ունենալով զոհված հերոսների ծնողների հանդեպ, մենք հավերժ պարտավոր ենք վառ պահել մեր հայրենիքի համար նահատակված եղբայրների հիշատակը, առաջարկում եմ Վարդենիս համայնքի Նորակերտ բնակավայրի

2-րդ փողոցը անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Լեոնիկ Ղազարյանի անվամբ:

Բոլոր պահանջվող փաստաթղթերը կցված են նախագծին:

4-րդ փողոցը անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Կամո Հովհանյանի անվամբ:

1-ին փողոցը անվանակոչել Արցախյան 44-օրյա պատերազմում զոհված Սամո Ղազարյանի անվամբ:

3-րդ փողոցը անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Արշակ Սարգսյանի անվամբ:

5-րդ փողոցը անվանակոչել Արցախյան 1-ին պատերազմում զոհված Սեյրան Սարոյանի անվամբ:

Հանձնարարել Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնին՝ ապահովել որոշման կատարումը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

Լսեցին

**ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՅԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
<<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
N 37-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՃԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010թվականի մարտի 24-Ա հրամանով հաստատված <<Կյանքի դժվար իրավիճակներում գտնվող երեխաների ավտոմատային տեղեկատվական համակարգի շահագործման կարգը>> և <<Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին>> ՀՀ օրենքը, որը կարգավորում է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների պաշտպանությունը պետական կառավարման և ՏԻՄ կողմից և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Վարդենիս համայնքի ավագանու 06 մայիսի 2022 թվականի N 37-Ա որոշումը

2. Հաստատել Վարդենիս համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ-համայնքի ղեկավար-Ահարոն Խաչատրյան

Քարտուղար-աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ-Աննա Վարդանյան

Անդամներ-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ- Կարեն Մկրտչյան

-աշխատակազմի քարտուղար-Կամո Զարոյան

-ՄՄԾ Վարդենիսի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանք և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ՝ Լուսինե Հովսեփյան

-<<Աստղավարդ>> ՀԿ նախագահ- Մելանյա Եփրեմյան

Վարդենիսի համայնքապետարանին իրավաբանական ծառայություններ մատուցող Մասնավոր իրավաբանական կենտրոնի իրավաբան-Լալա Խաչատրյան

աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջատար մասնագետ-Մարինե Մնացականյան

-ավագանու անդամ-Սաթենիկ Մինասյան

-ավագանու անդամ-Ջեմարա Վարդանյան

-ավագանու անդամ-Կարեն Սիմոնյան

հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը, նշելով որ Վարդենիս համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում, ինչպես գիտենք, նախկինում կատարվել է փոփոխություն, քանի որ աշխատանքների ճիշտ կատարման համար անհրաժեշտ էր իրավաբանի մասնակցություն հանձնաժողովի կազմում, և ընթացքում մի քանի անգամ կատարվել են փոփոխություններ, առաջարկում եմ Վարդենիս համայնքի ավագանու Վարդենիս համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին 06 մայիսի 2022 թվականի N 37-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչել և հաստատել Վարդենիս համայնքի խնամակալության և հոգաբարձության նոր հանձնաժողով, հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ-համայնքի ղեկավար՝Ահարոն Խաչատրյան

Քարտուղար-աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի պետ՝Աննա Վարդանյան

Անդամներ-համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Կարեն Մկրտչյան

-աշխատակազմի քարտուղար՝ Կամո Զարոյան

-ՄՄԾ Վարդենիսի տարածքային կենտրոնի սոցիալական աշխատանք և զբաղվածության ծրագրերի բաժնի պետ՝ Լուսինե Հովսեփյան

-<<Աստղավարդ>> ՀԿ նախագահ՝ Մելանյա Եփրեմյան

-Վարդենիսի համայնքապետարանին իրավաբանական ծառայություններ մատուցող <<Մասնավոր իրավաբանական կենտրոն>>-ի իրավաբան՝ Լալա Խաչատրյան

-աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության բաժնի առաջատար մասնագետ՝ Մարինե Մնացականյան

-ավագանու անդամ՝ Սաթենիկ Մինասյան

-ավագանու անդամ՝ Ջեմարա Վարդանյան

-ավագանու անդամ՝ Կարեն Սիմոնյան

<<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցությունից առաջադրեցին Կարեն Սիմոնյանի թեկնածությունը, որպես հանձնաժողովի անդամ:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Հարցի ընթերցման ժամանակ դահլիճից դուրս եկավ <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ավագանու անդամ Արաքսյա Հայրապետյանը և չմասնակցեց քվեարկությանը:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

«Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի հանրակրթական դպրոցների 2023-2024 ուստարվա շրջանավարտներին շնորհավորելու և դրամական խրատուսանքի արժանացնելու համար տրամադրել 1 305 000 ՀՀ դրամ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ սույն թվականի մայիսի 24-ին և 25-ին հանրակրթական դպրոցներում վերջին զանգ է, ուստի առաջարկեց շրջանավարտների թվին համապատասխան դպրոցներին գումար տրամադրել, էքսկուրսիաների և այլ ծախսերի համար:

Առաջարկություններ և առարկություններ չեղան:
Քվեարկության արդյունքում 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ.-Ի "ՀԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի ավագանու 2024թ. փետրվարի 6-ի «ՀԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1.«ՀԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն՝

1) հաստիքացուցակի 10-րդ տողի «մանկական-թատերական ղեկավար»-ի 0,5 հաստիքային միավորը ավելացնել, դարձնելով՝ 1 միավոր

2)22-րդ տողի «պահակ» հաստիքային միավորը անվանափոխել «Վ. Համբարձումյանի և Գ. Կարապետյանի անվան զբոսայգիների պատասխանատու» բառերով՝ դրույքաչափը թողնելով անփոփոխ:

2. <<Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն<<Վարորդ Գրեյդերի>> նախկինում հաստատված 13.500 ՀՀ դրամ օրավարձը դարձնել 20.000 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

- Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով որ կա անհրաժեշտություն <<<< Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատ>> ՀՈԱԿ-ի նախկինում հաստատված հաստիքացուցակի 10-րդ տողի <<մանկական-թատերական ղեկավար>>-ի 0,5 հաստիքային միավորը ավելացնել, դարձնելով՝ 1 միավոր:

22-րդ տողի <<պահակ>> հաստիքային միավորը անվանափոխել <<Վ. Համբարձումյանի և Գ. Կարապետյանի անվան զբոսայգիների պատասխանատու>> բառերով՝ դրույքաչափը թողնելով անփոփոխ:

- Երկրորդ կետով <<Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ի նախկինում հաստատված հաստիքացուցակում՝ հաշվի առնելով գրեյդերի վարորդների ծանրաբեռնված աշխատանքը, այն, որ սպասարկում են բոլոր բնակավայրերը՝ հարթեցնելով փողոցները, ճանապարհները և կատարում են նաև այլ աշխատանքներ, առաջարկում են կատարել փոփոխություն. <<Վարորդ Գրեյդերի>> նախկինում հաստատված 13.500 ՀՀ դրամ օրավարձը ավելացնել 6500 դրամով և դարձնել 20.000 ՀՀ դրամ:

Առաջարկությամբ հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը՝ նշելով, որ բազմիցս առաջարկել է, որ նախագծերի մեջ բացվածքները կոնկրետ դրվեն և ավագանիները ոչ թե համեմատությունների մեջ աշխատանք, այլ կոնկրետ աշխատանքի նախագծերի մեջ, խնդրեց որ այսուհետ հաշվի առնեն իր ասածը և նախագծերը գրվեն բացվածքներով:

Այլ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի մայիսի 22-ին, ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 20 հարցից.

1. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ.-Ի “ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ

ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

2023-2024 ՈՒՍ. ՏԱՐԿԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06 ՄԱՅԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 37-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՃԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՈՐ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՓՈՂՈՑՆԵՐՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՍՈՐՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 16/1 ՀԱՍՅԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
9. Մ-11 ՄԱՐՏՈՒՆԻ-ՎԱՐԴԵՆԻՍ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ 3,6 ԿՄ ՀԱՏՎԱԾԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԼԻՑՔ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
10. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱԿՈՒՅՏԵՐԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ, ԱՂԲԸ ՀՈՂԻ ՇԵՐՏՈՎ ԾԱԾԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
12. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՏԻՐՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ՝ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
13. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 12.04.2024 ԹՎԱԿԱՆԻ «ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆՆ» N 37-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
14. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ (ՆԱԽԿԻՆ ԾՈՎԱԿ ՀԱՄԱՅՆՔ) 17.01.2021 Թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 11-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
15. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԱՂՔՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԵԿ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԸ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ» ԶՕԸ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ
16. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՆԵՐՍԵՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
17. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՂԱԶԱՐ ԽՉԵՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ S 430 ՄԱԿՆԻՉԻ 10NN210 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՉԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
18. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՊԱՐՏԻԿ ՄԱԴՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ BMW 745 I ՄԱԿՆԻՉԻ 85AK500 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՉԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ NISSAN PATHFINDER 3.0 ՄԱԿՆԻՇԻ 35PZ375 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ S 320 ՄԱԿՆԻՇԻ 39TN999 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի մայիսի 22-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 23-ը, բացակայում էին <<Քաղաքացիաան պայմանագիր խմբակցության>> ավագանու անդամներ Արամ Մելքոնյանը, Արտակ Մանուկյանը, հարգելի բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ավագանու անդամ Արմինե Աղաջանյանը և <<Ահարոն Խաչատրյան>> խմբակցության ավագանու անդամ Աշոտ Խաչատրյանը: Նիստը իրավագոր է: Նիստը վարում է համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, քաղաքաշինության հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Արգար Արգարյանը, համայնքի ղեկավարի օգնական Ա. Եղիազարյանը և այլ անձինք: Համայնքի ղեկավարը առաջարկեց օրակարգի 2-րդ հարցը՝ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2023Թ. <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՀԱՆՈՒՄՆԵՐԻ ԾԱԽՍՄԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 173-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հանել, քանի որ նախարարությունից ծրագրային փոփոխություններ են կատարվել, փոխարենը ներառել <<< ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2023-2024 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> հարցը այնուհետև օրակարգը հաստատելու մասին հարցը դրվեց քվեարկության: Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգը բաղկացած 21 հարցից:

Քվեարկության արդյունքում 23 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ օրակարգը հաստատվեց:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ 

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ 

ՀԱՄԼԵՏ ԲԱՋՈՅԱՆ 

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ 

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ 

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ 

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

[Handwritten signature]

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

[Handwritten signature]

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

[Handwritten signature]

ՄՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

[Handwritten signature]

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

[Handwritten signature]

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

[Handwritten signature]

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

[Handwritten signature]

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

[Handwritten signature]

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

[Handwritten signature]

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

[Handwritten signature]

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

[Handwritten signature]

ԶԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

[Handwritten signature]

Նիսպին արձանագրեց՝ Կամո Զարոյանը



[Handwritten signature]

[Handwritten mark]